Վերանայված Եվրոպական սպորտի խարտիա

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիր,
Եվրոպայի խորհուրդ

Enlarged Partial Agreement on Sport

epas

Accord partiel élargi sur le sport

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Վերանայված Եվրոպական սպորտի խարտիա

Նախարարների կոմիտեի CM/Rec(2021)5
հանձնարարականը՝ ընդունված 2021 թվականի հոկտեմբերի
13-ին Նախարարների տեղակալների 1414-րդ նիստում

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է ոչ առևտրային նպատակներով՝ տեքստի ամբողջականությունը պահպանելու, հատվածը համատեքստից դուրս չօգտագործելու, թերի տեղեկատվություն չտրամադրելու կամ ընթերցողին տեքստի բնույթի, ծավալի կամ բովանդակության վերաբերյալ այլ կերպ չմոլորեցնելու պայմանով: Բնօրինակ տեքստը պետք է նշվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարին»: Բնօրինակ փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրման/թարգմանության վերաբերյալ բոլոր այլ հարցումները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ նամակագրությունները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրին (EPAS): Եվրոպայի խորհուրդ, F-67075 Strasbourg Cedex, Էլ-փոստ՝ sport.epas@coe.int

Բնօրինակի կազմը և դասավորությունը՝ Փաստաթղթերի և հրապարակումների մշակման վարչություն (DPDP), Եվրոպայի խորհուրդ

Սույն հրապարակումը չի խմբագրվել DPDP խմբագրական բաժնի կողմից՝ տպագրական և քերականական սխալները շտկելու համար:

© Եվրոպայի խորհուրդ, հունիս 2022
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

Բովանդակություն

CM/REC(2021)5 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԽԱՐՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ 5

Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 11

Հոդված 1. Խարտիայի նպատակը 11

Հոդված 2. «Սպորտ» հասկացության սահմանումը և Խարտիայի շրջանակը 12

Բ. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐ 14

Հոդված 3. Պետական մարմիններ 14

Հոդված 4. Սպորտային շարժումը 15

Հոդված 5. Կորպորատիվ և մասնագիտական հատվածներ 16

Գ. ԱՐԺԵՔԱՀԵՆ ՍՊՈՐՏ 17

Հոդված 6. Մարդու իրավունքներ 17

Հոդված 7. Արժեքների կրթություն սպորտային էթիկայի միջոցով 18

Հոդված 8. Բարեվարքություն 19

Հոդված 9. Կայունություն 20

Դ. ՍՊՈՐՏ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 22

Հոդված 10. Սպորտով զբաղվելու իրավունք 22

Հոդված 11. Սպորտով զբաղվելու հիմքերի ստեղծում 23

Հոդված 12. Մասնակցության խթանում 24

Հոդված 13. Կատարողական ցուցանիշների բարելավում 24

Հոդված 14. Բարձր մակարդակի և պրոֆեսիոնալ սպորտի աջակցում 25

Ե. ՄԻՋՈՑՆԵՐ 27
Հոդված 15. Սպորտային օբյեկտներ և գործունեություն 27
Հոդված 16. Մարդկային ռեսուրսներ 27
Հոդված 17. Տեղեկատվություն և հետազոտություն 28
Հոդված 18. Ֆինանսներ 29
Հոդված 19. Ներպետական և միջազգային համագործակցություն 30
Զ. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 31
Հոդված 20. Խարտիայի իրագործման աջակցություն և հետագա քայլեր 31

CM/Rec(2021)5 հանձնարարականը վերանայված Եվրոպական սպորտի խարտիայի մասին

Նախաբան

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» մասի դրույթներով,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել ավելի մեծ միասնության իր անդամների միջև՝ ի շահ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող իդեալների և սկզբունքների պաշտպանության և իրագործման, ինչպես նաև նրանց տնտեսական ու սոցիալական առաջընթացի խթանման,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ԵՊՇ թիվ 5, Կոնվենցիա),

Հաշվի առնելով Եվրոպական սոցիալական խարտիան (ԵՊՇ թիվ 35, վերանայված ԵՊՇ թիվ 163), որով սահմանվում են առողջության, կրթության, մշակույթի և համայնքի կյանքին մասնակցության իրավունքները, որոնց իրականացման մեջ սպորտն անբաժանելի մաս է կազմում,

Հաշվի առնելով «սպորտ բոլորի համար» քաղաքականության սկզբունքների վերաբերյալ Նախարարների կոմիտեի Res(76)41 բանաձևը, որը սահմանվել է սպորտի հարցերով պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի 1975 թվականի առաջին նիստին՝ «Եվրոպական սպորտ բոլորի համար խարտիա» խորագրով, որը թարմացվել է 1992 և 2001 թվականներին՝ դառնալով Եվրոպական սպորտի խարտիա (Խարտիա), որը հաստատվել է անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի

Rec(92)13 (վերանայված) հանձնարարականով վերանայված եվրոպական սպորտի խարտիայի մասին, և որ խարտիայի հետագա խմբագրումները դարձել են սպորտի ոլորտում պետական քաղաքականությունների կարևոր հիմք՝ հնարավորություն ընձեռելով անհատներին իրացնել սպորտին մասնակցելու իրենց իրավունքը,

Հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական ակտիվության և սպորտի միջազգային խարտիան, որը նպաստել է ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական ակտիվության և սպորտի բնագավառում յուրաքանչյուր մարդու անձեռնմխելիության և արժանապատվության նկատմամբ հարգանքի ապահովմանը, առանց խտրականության ֆիզիկական գործունեության խթանմանը, խոցելի կամ մարգինալացված խմբերի բացառման դեմ պայքարին, ինչպես նաև սպորտով զբաղվելը որպես հիմնարար իրավունք ճանաչելուն (Հոդված 1),

Հաշվի առնելով Եվրոպական սպորտի խարտիայի վերջին վերանայումից հետո սպորտի բնագավառում ընդունված իր հանձնարարականները անդամ պետություններին՝

- սպորտում ռասիզմի, այլատյացության և ռասայական անհանդուրժողականության կանխարգելման մասին (Rec(2001)6),
- բոլոր եվրոպական երկրներում երեխաների և երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և սպորտի բարելավման մասին (Rec(2003)6),
- սպորտում լավ կառավարման սկզբունքների մասին (Rec(2005)8),
- Սպորտային էթիկայի վերանայված կանոնագրքի մասին (CM/Rec(2010)9),
- Եվրոպայում սպորտի ինքնավարության սկզբունքի մասին (CM/Rec(2011)3),
- արդյունքների մեքենայությունների, մասնավորապես՝ խաղերի պայմանավորվածության դեմ պայքարում սպորտի բարեվարքության խթանման մասին (CM/Rec(2011)10),

- միգրացիայի հետ կապված վտանգներից մանկահասակ և երիտասարդ մարզիկների պաշտպանության մասին (CM/Rec(2012)10),
- սպորտում գենդերային մեյնսթրիմինգի մասին (CM/Rec(2015)2),
- սպորտում լավ կառավարման խթանման մասին (CM/Rec(2018)12),
- էքստրեմալ մարտարվեստների և կոնտակտային մարտաձևերի (combat activities) մասին (CM/Rec(2021)3),

Հաշվի առնելով 2018 թվականի հոկտեմբերի 16-ին Թբիլիսիում անցկացված Եվրոպայի խորհրդի սպորտի հարցերով պատասխանատու նախարարների 15-րդ համաժողովի կողմից ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշտպանությունը սպորտում. պարտավորություններ և ընդհանուր պատասխանատվություն» և «Պայքար կոռուպցիայի դեմ սպորտում. Գործողությունների ակտիվացում» բանաձևերը, ինչպես նաև Մարդու իրավունքների և սպորտի մասին միջազգային հռչակագիրը (Թբիլիսիի հռչակագիր), որն ընդունվել է նույն համաժողովի ժամանակ,

Հաշվի առնելով 2021 թվականի փետրվարի 11-ին Եվրոպայի խորհրդի սպորտի հարցերով պատասխանատու նախարարների 16-րդ համաժողովի կողմից իր առցանց եզրափակիչ նիստին ընդունված՝ «Եվրոպական մոտեցում սպորտի քաղաքականությանը. Եվրոպական սպորտի խարտիայի վերանայում» և «Մարդու իրավունքները սպորտում» բանաձևերը,

Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է համաձայնության գալ Եվրոպայում սպորտի զարգացման ընդհանուր եվրոպական շրջանակի վերաբերյալ՝ հիմված բազմակարծ ժողովրդավարության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքների վրա,

Ընդգծելով, որ սպորտը կարող է նպաստել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգի և դրա կայուն զարգացման նպատակների խթանմանը,

Նկատի ունենալով, որ՝

- Սպորտը կամավոր ընտրության վրա հիմնված սոցիալական, կրթական և մշակութային գործունեություն է, որը խրախուսում է շփումը եվրոպական երկրների և նրանց քաղաքացիների միջև, և հիմնարար դեր է խաղում Եվրոպայի խորհրդի նպատակի իրականացման գործում՝ ամրապնդելով ժողովուրդների միջև կապերը և զարգացնելով եվրոպական մշակութային ինքնության գիտակցումը,
- Սպորտը կարող է բազմակողմանիորեն նպաստել անհատական բարեկեցությանը և սոցիալական զարգացմանը, իսկ հատկապես ֆիզիկական վարժությունները օգնում են բարելավել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան բարեկեցությունը,
- Առկա է սերտ փոխկապակցվածություն շրջակա միջավայրի բարենպաստ պայմանների, սպորտային գործունեության և սպորտում բնապահպանական նկատառումներն ու կայուն զարգացման սկզբունքը ինտեգրելու անհրաժեշտության միջև,
- Սպորտը նաև ինքնին կարևոր տնտեսական հատված է Եվրոպայում, որը նպաստում է տնտեսական աճին, զարգացմանը և զբաղվածությանը, ինչի մասին են վկայում բազմաթիվ ուսումնասիրություններ,
- Քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխություններն ու դրանց ազդեցությունը սպորտի վրա Եվրոպայում տեղի են ունեցել սրընթաց 2001 թվականին Եվրոպական սպորտի խարտիայի վերջին վերանայումից ի վեր՝ ստեղծելով անհրաժեշտություն մշակելու նոր Եվրոպական սպորտի խարտիա, որը կարտացոլի այդ փոփոխություններն ու թույլ կտա դիմակայել ապագա մարտահրավերներին,
- Սպորտի զարգացման և սպորտային էթիկայի չափանիշների համատեղումը սպորտային քաղաքականության մեկ միասնական վկայակոչվող ստանդարտում (փաստաթղթում) կլինի ավելի արդյունավետ,
- Պետական մարմինները պետք է փոխշահավետ համագործակցություն զարգացնեն սպորտային շարժման հետ՝

որպես սպորտի կարևորագույն հիմք, որպեսզի խթանեն սպորտի արժեքներն ու օգուտները, և Եվրոպական շատ երկրներում պետական մակարդակով քայլեր են ձեռնարկվում սպորտի ոլորտում՝ այս շարժման աշխատանքը համալրելու և դրան աջակցելու նպատակով (սուբսիդիարություն),

- Եվրոպայում մրցակցային սպորտի ներկա կառուցվածքը, որը առավելապես հիմնված է ազգային մոդելի վրա՝ ներառելով մրցումներ տարածաշրջանային, համազգային, մայրցամաքային և համաշխարհային մակարդակներում, և որը հարգում է միջազգային կառավարման մարմինների կարգավորող դերը, նպաստել է սպորտի համահունչ զարգացմանը և միջազգային համերաշխությանը,

Հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին՝

ա. սպորտի ոլորտում իրենց ներքին քաղաքականությունը և, անհրաժեշտության դեպքում, ցանկացած առնչվող օրենսդրություն հիմնել Եվրոպական սպորտի խարտիայի վրա, ինչպես սահմանված է սույն հանձնարարականի հավելվածում,

բ. առաջարկել համապատասխան շահագրգիռ կողմերին իրենց քաղաքականությունները մշակելիս հաշվի առնել Եվրոպական սպորտի խարտիայով ամրագրված սկզբունքները,

գ. ձեռնարկել քայլեր Եվրոպական սպորտի խարտիայի լայն տարածումն ապահովելու համար.

դ. տրամադրել տեղեկություններ կամ դյուրին դարձնել տեղեկությունների և տվյալների տրամադրումը, որոնք անհրաժեշտ կլինեն Խարտիայի իրագործման մշտադիտարկման համար:

Ա. Ներածական դրույթներ

Հոդված 1. Խարտիայի նպատակը

Սույն Խարտիայի նպատակն է ուղղորդել կառավարություններին սպորտի համար իրավական և քաղաքական շրջանակների մշակման և իրագործման գործում՝ ընդգծելով դրա (սպորտի) բազմակողմանի անհատական և սոցիալական օգուտները (մասնավորապես առողջության, ներառականության և կրթության համար) և պահպանելով ու խթանելով մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության արժեքները, ինչպես ամրագրված են Եվրոպայի խորհրդի կիրառելի չափանիշներում: Այս նպատակին հասնելու համար կառավարությունները պետք է ձեռնարկեն քայլեր, որոնք անհրաժեշտ են՝

1. Հնարավորություն տալու յուրաքանչյուր անհատի սպորտով զբաղվելու և, մասնավորապես, ապահովելու, որ՝

   ա. բոլոր երիտասարդները ստանան ֆիզիկական դաստիարակություն ուսումնական հաստատություններում և հնարավորություն ունենան զարգացնելու ֆիզիկական գրագիտություն, ֆիզիկական պատրաստվածություն և ձեռք բերելու հիմնական շարժողական հմտություններ,

   բ. յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա սպորտով զբաղվելու ապահով, անվտանգ և առողջ միջավայրում,

   գ. սպորտի զարգացումը լինի ներառական, գնահատվի և մշտադիտարկվի կանոնավոր կերպով,

   դ. յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա բարելավել սպորտում իր կատարողական ցուցանիշները՝ մարզական ժամանցի նպատակով սպորտով զբաղվելու շրջանակից դուրս, և հասնել անձնական նվաճումների և (կամ) գերազանցության մակարդակի էթիկական, արդար և պատասխանատու ձևով,

2. Պաշտպանելու և զարգացնելու արժեքահեն սպորտը, որը նախապայման է սպորտի անհատական և սոցիալական օգուտներն առավելագույնի հասցնելու համար, և, մասնավորապես, ապահովելու, որ՝

ա. պաշտպանված լինեն սպորտային գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող անձանց մարդու իրավունքները,

բ. սպորտային գործունեությունը նպաստի սպորտում ներգրավված անձանց շրջանում էթիկայի վարքականոնների և վարքագծի ամրապնդմանը,

գ. ապահովված լինի սպորտային կազմակերպությունների, սպորտային մրցումների և սպորտային գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող անձանց անձեռնմխելիությունը,

դ. սպորտային գործունեությունը համահունչ լինի կայուն զարգացման սկզբունքներին:

Հոդված 2. «Սպորտ» հասկացության սահմանումը և Խարտիայի շրջանակը

1. Սույն Խարտիայի նպատակների իրագործման համար «սպորտ» նշանակում է ֆիզիկական գործունեության բոլոր ձևերը, որոնք, պատահական կամ կազմակերպված մասնակցությամբ, ուղղված են ֆիզիկական պատրաստվածության և հոգեկան բարեկեցության պահպանմանը կամ բարելավմանը, սոցիալական հարաբերությունների ձևավորմանը կամ բոլոր մակարդակների մրցումներում արդյունքներ ձեռք բերմանը:

2. Սույն Խարտիայում ընդգծվում են եվրոպական սպորտի և դրա կազմակերպման շրջանակի ընդհանուր հատկանիշները, որոնք սպորտային շարժման կողմից ընկալվում են որպես եվրոպական սպորտի մոդել: Խարտիան ընդհանուր ուղեցույց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար՝ գործող օրենսդրությունը կամ այլ քաղաքականությունները կատարելագործելու և սպորտի համար

համապարփակ շրջանակ մշակելու նպատակով: Այն հստակեցվել և լրացվել է սպորտի ոլորտում կարևորագույն խնդիրներին վերաբերող իրավաբանորեն պարտադիր ստանդարտներով, ինչպիսիք են՝

ա. Սպորտային միջոցառումների և հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսների անվայել վարքի մասին եվրոպական կոնվենցիան (ԵՊՇ թիվ 120),

բ. Հակադոպինգային կոնվենցիան (ԵՊՇ թիվ 135),

գ. Մարզական մրցումների մեքենայությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (ԵՊՇ թիվ 215),

դ. Ֆուտբոլային խաղերի և այլ մարզական միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման միասնական մոտեցման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (ԵՊՇ թիվ 218):

3. Սույն Խարտիայի որոշ դրույթների իրագործումը կարող է հանձնարարվել պետական կամ ոչ կառավարական սպորտային մարմիններին կամ սպորտային կազմակերպություններին:

Բ. Շահագրգիռ կողմեր

Հոդված 3. Պետական մարմիններ

1. Պետական մարմինների դերը հիմնականում սպորտային շարժման և կորպորատիվ հատվածի գործունեությանը փոխլրացնող է: Պետական մարմինները պատասխանատու են՝ սահմանելու շրջանակային պայմանները և, անհրաժեշտության դեպքում, իրավական պահանջները, որոնք անհրաժեշտ են սպորտի զարգացման համար: Սպորտային քաղաքականության մշակման և վարչարարման ընթացքում պետական մարմինները պետք է հետամուտ լինեն սույն Խարտիայի նպատակներին և ցույց տան, որ առաջնահերթություն են տալիս իրավունքի գերակայության և լավ կառավարման սկզբունքների պահպանմանը:

2. Պետք է ապահովվի հորիզոնական համագործակցություն բոլոր այն պետական մարմինների քաղաքականությունների և գործողությունների միջև, որոնք առնչվում են սպորտին, ինչպիսիք են սպորտի, կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, քաղաքային և տարածքային պլանավորման, մշակույթի, արդարադատության, մարդու իրավունքների և երեխաների պաշտպանության մշտադիտարկման, իրավապահության, խաղադրույքների կարգավորման, շրջակա միջավայրի և զարգացման համար պատասխանատու մարմինները: Պետք է ապահովվի նաև ուղղահայաց համագործակցություն պետական և մարզային ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև, որոնք առանցքային դեր են խաղում համայնքային մակարդակով սպորտային գործունեության ապահովման գործում:

Հոդված 4. Սպորտային շարժումը

1. Սպորտային շարժումը, որը ներառում է ոչ կառավարական, շահույթ չհետապնդող սպորտային կազմակերպություններ, պետական մարմինների հիմնական գործընկերն է սպորտային քաղաքականության իրականացման գործում: Շարժման կազմակերպությունները պարտավոր են հետևել այն իրավական պահանջներին և սահմանափակումներին, որոնք կիրառվում են օրենսդրությամբ՝ համաձայն միջազգային չափանիշների:

2. Պետք է շարունակաբար խթանել կամավորական ոգու և շարժման զարգացումը սպորտում, մասնավորապես՝ աջակցելով կամավորական սպորտային կազմակերպությունների գործունեությանը: Այս նպատակով պետական մարմինները և սպորտային շարժումը պետք է ապահովեն շրջանակային պայմաններ, որոնք կխթանեն կամավորների ակտիվ ներգրավվածությունը սպորտում:

3. Սպորտային շարժման կազմակերպությունները լիարժեք կերպով օգտվում են Մարդու իրավունքների և հիմարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով ամրագրված՝ հավաքների և միավորման ազատությունից: Նրանք կարող են ինքնուրույն որոշումներ կայացնել և պետք է ընտրեն իրենց ղեկավարներին ժողովրդավարական ճանապարհով՝ լավ կառավարման սկզբունքներին համապատասխան: Թե՛ կառավարությունները, թե՛ սպորտային կազմակերպությունները պետք է փոխադարձ հարգանքով վերաբերվեն միմյանց որոշումներին:

4. Սպորտային շարժման կազմակերպությունները, որոնք եկամուտ են ստանում սպորտային ժամանցի շուկայից, պետք է հանձնառու լինեն ֆինանսական համերաշխության՝ ապահովելով հավասարակշռություն բարձր մակարդակի և համայնքային մակարդակի սպորտի, տարբեր սպորտաձևերի, ինչպես նաև աշխարհի բոլոր տարածաշրջանների միջև:

Հոդված 5. Կորպորատիվ և մասնագիտական հատվածներ

1. Կորպորատիվ և մասնագիտական հատվածները կարևոր դեր են խաղում սպորտի զարգացման մեջ: Անհրաժեշտ է երկխոսություն և համագործակցություն ծավալել այն ընկերությունների և մասնագիտական կատեգորիաների ներկայացուցիչների հետ, որոնք ներգրավված են սպորտի հետևյալ ոլորտներում՝ մարզումների, միջոցառումների կամ մրցումների կազմակերպում, սպորտային ապրանքների արտադրություն, սպորտային սնունդ, սպորտային օբյեկտների կառուցում, ծառայությունների մատուցում և լրատվամիջոցներ:

2. Վերոնշյալ ոլորտների ներկայացուցիչների հետ համագործակցելիս կառավարությունները պետք է՝

ա. ճանաչեն նրանց որպես նորարարության շարժիչ ուժ, որը կարող է ծառայել սպորտի զարգացմանը,

բ. համոզվեն, որ նրանք հետևում են համապատասխան կանոնակարգերին, օրինակ՝ տնտեսական և սոցիալական իրավունքների, անվտանգության, որակավորումների, խտրականության դեմ պայքարի, սպորտային բարեվարքության, կորպորատիվ կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում,

գ. խթանեն Միավորված ազգերի կազմակերպության Բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ ուղղորդող սկզբունքների, ինչպես նաև Մարդու իրավունքների և բիզնեսի մասին անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2016)3 հանձնարարականի ընդունումը,

դ. խրախուսեն նրանց համագործակցել սպորտային շարժման հետ և մասնակցել համերաշխության ծրագրերին, հատկապես, երբ նրանք օգտվում են սպորտային շարժման կողմից իրականացվող և ֆինանսավորվող գործունեությունից:

Գ. Արժեքահեն սպորտ

Հոդված 6. Մարդու իրավունքներ

1. Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է հարգեն և պաշտպանեն միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և պետք է հետևեն բիզնեսում և այլ գործունեության մեջ դրանց իրականացման համար սահմանված ընդհանուր շրջանակին:

2. Սպորտում մարդու իրավունքների նկատմամբ պատշաճ ուշադրության մեխանիզմը պահանջում է հարգել սպորտային գործունեության մեջ ներգրավված կամ դրան առնչվող անձանց մարդու իրավունքները, ուստի անհրաժեշտ է՝

ա. ապահովել, որ մարզիկների և սպորտում ներգրավված բոլոր անձանց իրավունքները հարգվեն, պաշտպանվեն և խթանվեն,

բ. պայքարել սպորտում կամայականությունների և այլ չարաշահումների դեմ՝ ապահովելու իրավունքի գերակայության նկատմամբ լիարժեք հարգանք սպորտային գործունեությունում, այդ թվում՝ իրավական պաշտպանության միջոցների, արդարադատության ու արդար դատաքննության իրավունքի հասանելիություն՝ մարդու իրավունքների կիրառելի չափորոշիչներին համապատասխան,

գ. աշխատել գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ սպորտում և սպորտի միջոցով՝ մասնավորապես սպորտում գենդերային մեյնսթրիմինգի ռազմավարության իրականացման միջոցով,

դ. կիրառել զրոյական հանդուրժողականության քաղաքականություն բռնության և խտրականության բոլոր ձևերի նկատմամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակում գտնվող անհատներին և խմբերին, ինչպիսիք են երեխաները, միգրանտները և հաշմանդամություն ունեցող անձինք,

ե. աշխատել համապատասխան քաղաքականության և (կամ) կարգավորող շրջանակներում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովման հստակ հանձնառություն ներառելու ուղղությամբ,

զ. պաշտպանել մարդու իրավունքները սպորտային միջոցառումների կազմակերպման համատեքստում և ներդնել մարդու իրավունքների պաշտպանության նկատառումներն ու նպատակները խոշոր սպորտային միջոցառումների ամբողջ շրջափուլում՝ սկսած հայտամրցույթի գործընթացից մինչև երկարատև դրական ժառանգության ապահովման պլանավորում,

է. շարունակաբար ներդրումներ կատարել սպորտում և սպորտի միջոցով մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչների արդյունավետ իրականացման ուղղությամբ՝ մասնավորապես զարգացնելով պետական և ոչ կառավարական գործընկերություններ և օգտագործելով բազմաշահառու հարթակներ՝ սպորտում մարդու իրավունքների խախտումները կանխարգելելու և դրանց արձագանքելու միջոցներ որոշելու և խթանելու նպատակով:

Հոդված 7. Արժեքների կրթություն սպորտային էթիկայի միջոցով

1. «Սպորտային էթիկան» դրական հասկացություն է, որն ուղղորդում է մարդու վարքը: Այն սահմանվում է որպես մտածելակերպ, այլ ոչ՝ պարզապես գործելակերպ: Այն ապահովում է սպորտում բարեվարքությունը, հավասարությունը, ազնվությունը, գերազանցությունը, նվիրվածությունը, քաջությունը, թիմային ոգին,

կանոնների և օրենքների նկատմամբ հարգանքը, շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքը, սեփական անձի և այլոց նկատմամբ հարգանքը, ինչպես նաև համայնքի ոգին, հանդուրժողականությունն ու համերաշխությունը: Այն նաև ներառում է մարդու իրավունքների և կայուն զարգացման նկատմամբ հարգանք:

2. Սպորտային էթիկան պետք է խթանվի սպորտային բոլոր տեսակի գործունեություններում՝ համապատասխան քաղաքականությունների և ծրագրերի միջոցով: Պետք է ձեռնարկվեն պատշաճ քայլեր՝ սպորտային էթիկայի շուրջ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու և այս ոլորտում շարունակական կրթության հնարավորություններ ապահովելու համար:

3. Սպորտում և դրանից դուրս էթիկական գործելակերպ ընտրելու կարողության կրթությունը սպորտի միջոցով ձեռք բերվող հմտությունների անբաժանելի մասն է: Արժեքահեն սպորտով զբաղվելը կարող է հզորացնել մարդկանց և սովորեցնել արդարություն, թիմային աշխատանք, հավասարություն, կարգապահություն, ներառականություն, հարգանք և բարեվարքություն:

Հոդված 8. Բարեվարքություն

1. «Սպորտային բարեվարքությունը» ներառում է անձնական, մրցակցային և կազմակերպչական բարեվարքության բաղադրիչները: Սպորտային բարեվարքությանը սպառնացող վտանգները ներառում են քրեական հանցագործություններ, ինչպիսիք են կոռուպցիան, խարդախությունը և հարկադրանքը, ինչպես նաև կանոնադրական և կարգապահական խախտումները և ոչ էթիկական վարքագիծ: Սպորտային բարեվարքության ապահովման գործում ուստի պետք է ներգրավվեն բոլոր շահագրգիռ կողմերը և՝

ա. պաշտպանեն բոլոր մարդկանց, հատկապես երիտասարդներին, բռնությունից, ոտնձգություններից և չարաշահումից, երաշխավորեն անհատների ապահովությունն ու անվտանգությունը և խթանեն միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների՝ ներառյալ

սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքը և պաշտպանությունը,

բ. աջակցեն արդար խաղի սկզբունքին, որը շատ ավելին է, քան պարզապես կանոններով խաղալը: Արդար խաղը ներառում է ընկերության, այլոց նկատմամբ հարգանքի և թիմային համագործակցության հասկացությունները: Այն ներառում է խաբեության, կանոնները պահպանելով անարդար ռազմավարությունների կիրառման, սպորտային մրցումների շահարկման և դոպինգի հետ կապված հարցեր,

գ. խթանեն սպորտի կառավարումը՝ հիմնված թափանցիկության, բարեվարքության, ժողովրդավարության, զարգացման և համերաշխության սկզբունքների վրա, որոնք պետք է ապահովվեն զսպումների և հակակշիռների համակարգով և վերահսկողության մեխանիզմների միջոցով:

2. Սպորտային բարեվարքության ապահովման քաղաքականությունը պետք է հիմնվի բազմաշահառու նախաձեռնությունների վրա, խրախուսի ազդարարներին և ազատ մեդիային և համագործակցի նրանց հետ, ուշադրություն դարձնի մարդու իրավունքների հարգմանը, ներդրումներ կատարի կրթության, կանխարգելման և իրազեկվածության բարձրացման գործում, մշտադիտարկվի, այդ թվում նաև իրավական պաշտպանության միջոցներով, և հաշվի առնի գենդերային խնդիրներն ու երիտասարդների շահերը:

Հոդված 9. Կայունություն

1. Սպորտում կայունության սկզբունքը պահանջում է, որ բոլոր տեսակի գործունեությունները լինեն տնտեսական, սոցիալական և բնապահպանական առումով կայուն, մասնավորապես՝

ա. իրենց աշխատանքը պլանավորելիս, իրականացնելիս և գնահատելիս սպորտային գործունեության և միջոցառումների կազմակերպիչները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն կայունությանը՝ լինի դա տնտեսական, սոցիալական, թե բնապահպանական,

բ. հաշվի առնելով, որ սպորտային ապրանքների աճող սպառումը կարող է դրական ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության վրա, արդյունաբերությունը պետք է պատասխանատվություն ստանձնի սոցիալական առումով բավարար և շրջակա միջավայրի համար անվնաս գործելակերպերի մշակման և ներդրման համար,

գ. փակ տարածքներում և բացօթյա միջոցառումները պետք է իրականացվեն պատասխանատու կերպով, այլ կերպ ասած՝ պետք է կիրառվի նախազգուշական սկզբունքը (ռեսուրսների պահպանում և ռիսկի կանխարգելում): Սպորտային ենթակառուցվածքներ տնօրինողները պետք է պրոակտիվ գործեն՝ գնահատելու իրենց օբյեկտների ազդեցություններն ու հետևանքները, խուսափելու բնությանը հնարավոր վնասներից և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկելու նման ռիսկերի կանխարգելիչ և պաշտպանական միջոցներ,

դ. խոշոր սպորտային միջոցառումների կազմակերպումը պետք է ապահովի կայուն ժառանգություն ընդունող համայնքների համար՝ հաշվի առնելով դրանց տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունը, մասնավորապես՝ ապահովելով, որ ենթակառուցվածքի ֆինանսական ծախսերը հավասարակշռված լինեն դրա հետագա օգտագործման և սպորտում մասնակցության վրա ունեցած ազդեցության հետ:

2. Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է պատասխանատվություն ստանձնեն՝ նվազեցնելու իրենց ածխածնային հետքը, և հետամուտ լինեն կլիմայի փոփոխության դեմ պայքարի ոլորտում պարտավորություններին և գործընկերություններին՝ գիտակցելով կլիմայի փոփոխության աճող բացասական ազդեցությունը հասարակության և սպորտի վրա:

Դ. Սպորտ բոլորի համար

Հոդված 10. Սպորտով զբաղվելու իրավունք

1. Սպորտի հասանելիությունը բոլորի համար համարվում է հիմնարար իրավունք: Բոլոր մարդիկ ունեն ապահով միջավայրում սպորտով զբաղվելու անօտարելի իրավունք ինչպես դպրոցական հաստատություններում, այնպես էլ դրանց շրջանակից դուրս, ինչը կարևոր է նրանց անհատական զարգացման համար և նպաստում է առողջության, կրթության, մշակույթի և համայնքի կյանքին մասնակցելու իրավունքների իրացմանը:

2. Անձի ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, սեռի կամ սեռական կողմնորոշման, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծննդյան կամ այլ կարգավիճակի հիմքով որևէ խտրականություն չի թույլատրվում սպորտային օբյեկտների կամ սպորտային գործունեության հասանելիության հարցում:

3. Այս իրավունքի պաշտպանության և իրականացման համար անհրաժեշտ է՝

ա. ապահովել ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջոցով ֆիզիկական, մտավոր և էթիկական կարողությունների զարգացման երաշխավորված հասանելիություն ինչպես կրթական համակարգում, այնպես էլ հասարակական կյանքի այլ ոլորտներում,

բ. ապահովել, որ յուրաքանչյուր ոք ունենա ֆիզիկական դաստիարակություն ստանալու և սպորտով զբաղվելու, ֆիզիկական գրագիտություն և ֆիզիկական պատրաստվածություն զարգացնելու, հիմնական շարժողական հմտություններ ձեռք բերելու և իր կարողություններին համապատասխան մարզական նվաճումների հասնելու բավարար հնարավորություններ,

գ. ապահովել հատուկ հնարավորությունների հասանելիություն երիտասարդների, այդ թվում՝ նախադպրոցական տարիքի երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ մասնակցելու իրենց կարիքներին համապատասխան կրթական և սպորտային ծրագրերին,

դ. ապահովել, որ տեղական համայնքի բոլոր անդամներն ունենան սպորտով զբաղվելու հնարավորություններ, և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկվեն լրացուցիչ միջոցներ, որպեսզի սոցիալապես անապահով անձինք կամ խմբերը և հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան լիարժեք օգտվել այդ հնարավորություններից,

ե. երաշխավորել, որ տեղական սպորտային ակումբներն ունենան համապատասխան իրավական կարգավիճակ և շրջանակային պայմաններ, որոնք հնարավորություն կտան ապահովել սպորտի մատչելի հասանելիություն բոլորի համար:

Հոդված 11. Սպորտով զբաղվելու հիմքերի ստեղծում

1. Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ քայլերը երիտասարդների շրջանում ֆիզիկական գրագիտության և ֆիզիկական պատրաստվածության զարգացման համար՝ հնարավորություն տալով նրանց ձեռք բերել հիմնական շարժողական հմտություններ և խրախուսելով զբաղվել սպորտով, մասնավորապես՝

ա. ապահովելով, որ բոլոր ուսանողների համար հասանելի լինեն սպորտի, մարզական ժամանցի և ֆիզիկական դաստիարակության ծրագրերն ու հարմարությունները, և որ այդ գործունեության համար նախատեսվեն համապատասխան ժամեր,

բ. ապահովելով բոլոր դպրոցներում այս ոլորտում որակավորված մանկավարժների վերապատրաստում,

գ. ապահովելով, որ պարտադիր կրթությունից հետո սպորտով զբաղվելու համար առկա լինեն համապատասխան հնարավորություններ,

դ. խրախուսելով դպրոցների կամ այլ կրթական հաստատությունների, դպրոցական սպորտային ակումբների և տեղական սպորտային ակումբների միջև համապատասխան կապերի ստեղծումը,

ե. խթանելով և զարգացնելով դպրոցների, տեղական սպորտային ակումբների և տեղական համայնքի կողմից սպորտային օբյեկտների օգտագործումը,

զ. ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ ծնողները, ուսուցիչները, մարզիչները և ղեկավարները խթանում են երիտասարդների շրջանում կանոնավոր ֆիզիկական ակտիվության մշակույթը,

է. տրամադրելով սպորտային էթիկայի վերաբերյալ կրթություն աշակերտներին՝ սկսած տարրական դպրոցից:

Հոդված 12. Մասնակցության խթանում

1. Սպորտով զբաղվելը, լինի դա հանգստի և մարզական ժամանցի, առողջության խթանման կամ կատարողական ցուցանիշների բարելավման համար, պետք է խրախուսվի ամբողջ բնակչության շրջանում՝ ապահովելով պատշաճ ենթակառուցվածքներ, բազմազան ծրագրեր և որակավորված մարզիչների, հրահանգիչների ու անձնակազմի հասանելիություն՝ անկախ նրանց կամավորական կամ պրոֆեսիոնալ կարգավիճակից:

2. Աշխատավայրերում սպորտով զբաղվելու հնարավորությունների ընձեռման խրախուսումը պետք է դիտարկվի որպես սպորտի հավասարակշռված քաղաքականության անբաժանելի մաս:

Հոդված 13. Կատարողական ցուցանիշների բարելավում

1. Բարձր մակարդակներում սպորտով զբաղվելը պետք է աջակցվի և խրախուսվի համապատասխան և հատուկ ձևերով: Աջակցությունը պետք է ներառի հետևյալ ոլորտները՝ տաղանդների

բացահայտում և խորհրդատվություն, համապատասխան սպորտային օբյեկտների ապահովում, մարզիկների խնամքի և աջակցության տրամադրում սպորտային բժշկության և սպորտային գիտության միջոցով՝ սպորտային էթիկայի չափանիշներին համահունչ, գիտական մարզչական մեթոդների խթանում և մարզիչների ու ղեկավար գործառույթներ ունեցող այլ անձանց վերապատրաստում, ինչպես նաև ակումբներին աջակցություն՝ համապատասխան կառույցներ և մրցակցային հնարավորություններ ապահովելու գործում:

Հոդված 14. Բարձր մակարդակի և պրոֆեսիոնալ սպորտի աջակցում

1. Պետք է մշակվեն բացառիկ սպորտային որակներ ցուցաբերող մարզիկներին ուղղակի կամ անուղղակի աջակցության համապատասխան մեթոդներ, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի լիարժեք կերպով զարգացնելու իրենց սպորտային և մարդկային կարողությունները՝ միաժամանակ ապահովելով լիակատար հարգանք նրանց անհատականության, ֆիզիկական ու բարոյական բարեվարքության նկատմամբ: Այդպիսի աջակցությունը պետք է ներառի տաղանդների բացահայտման, մարզիկների երկրորդ կարիերայի հնարավորության, ուսումնամարզական հաստատություններում հավասարակշռված կրթության և հասարակության մեջ սահուն ինտեգրման հետ կապված ասպեկտներ՝ բարձր մակարդակի սպորտում ներգրավվելու ընթացքում և դրանից հետո մասնագիտական առաջխաղացման հեռանկարների զարգացման միջոցով:

2. Պրոֆեսիոնալ սպորտի կազմակերպումն ու կառավարումը, այդ թվում՝ սպորտային ժամանցի արդյունաբերության կողմից, պետք է իրականացվի հրավասու և լավ կառավարվող մարմինների միջոցով, որոնք պետք է ապահովեն մարզիկների ներկայացուցիչների հետ պատշաճ սոցիալական երկխոսություն և համապատասխան միջազգային կառավարման մարմինների կարգավորող դերը խաղի համաձայնեցված կանոնների պահպանման, սպորտի բարեվարքության երաշխավորման և մրցումների օրացույցների

համակարգման գործում: Պրոֆեսիոնալ սպորտով զբաղվող անձինք պետք է ունենան համապատասխան սոցիալական կարգավիճակ, շահագործման բոլոր ձևերից պաշտպանվելու էթիկական երաշխիքներ, և օգտվեն տնտեսական ու սոցիալական իրավունքներից:

3. Բարձրագույն մակարդակի և պրոֆեսիոնալ սպորտային մրցումների կազմակերպումը պետք է համապատասխան լինի սպորտային մրցումների բաց լինելու սկզբունքին, որտեղ առաջնահերթությունը տրվում է սպորտային վաստակին: Մրցումների կազմակերպիչները պետք է ձգտեն համապատասխանեցնել անհատների/տեղական թիմերի և ազգային հավաքականների կարիքներն ու շահերը:

Ե. Միջոցներ

Հոդված 15. Սպորտային օբյեկտներ և գործունեություն

1. Քանի որ սպորտին մասնակցությունը մասամբ կախված է սպորտային օբյեկտների քանակից, բազմազանությունից և հասանելիությունից, դրանց ընդհանուր պլանավորումը պետք է լինի պետական մարմինների պատասխանատվության շրջանակում: Տրամադրվող օբյեկտների շարքում պետք է հաշվի առնվեն արդեն առկա հանրային և մասնավոր ենթակառուցվածքները: Պատասխանատու մարմինները պետք է հաշվի առնեն համազգային, մարզային և տեղական պահանջները և ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու օբյեկտների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև անվտանգ և լիարժեք շահագործումը:

2. Սպորտային ենթակառուցվածքները տնօրինողները պետք է ձեռնարկեն համապատասխան քայլեր՝ սոցիալապես անապահով խմբերի, այդ թվում՝ ֆիզիկական կամ մտավոր սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց, այդ օբյեկտներ մուտք գործելու հնարավորությունը ապահովելու համար:

3. Պետք է ստեղծվի հստակ շրջանակ և ձեռնարկվեն համապատասխան քայլեր՝ հնարավորություն տալու միջոցառումների կազմակերպիչներին և սպորտային ենթակառուցվածքները տնօրինողներին արդյունավետորեն կատարել անվտանգության ապահովման իրենց պարտավորությունները:

Հոդված 16. Մարդկային ռեսուրսներ

1. Անհրաժեշտ է խրախուսել համապատասխան մարմինների կողմից մարզական դասընթացների մշակումը, որոնց ավարտին կտրամադրվեն դիպլոմներ և որակավորումներ՝ ընդգրկելով սպորտի

բոլոր ասպեկտները, այդ թվում՝ դրա համապատասխանությունը մարդու իրավունքներին, էթիկային, բարեվարքությանն ու կայունությանը: Այդպիսի դասընթացները պետք է համապատասխանեն սպորտի տարբեր տեսակներում և մակարդակներում ներգրավված բոլոր խավերի մասնակիցների կարիքներին և նախատեսված լինեն ինչպես կամավորական, այնպես էլ պրոֆեսիոնալ գործունեություն իրականացնողների համար (հրահանգիչներ, մարզիչներ, մենեջերներ, պաշտոնյաներ, բժիշկներ, անվտանգության պատասխանատուներ, ճարտարապետներ, ինժեներներ, երեխաների պաշտպանության պատասխանատուներ և այլն):

2. Սպորտային գործունեությունը ղեկավարող կամ վերահսկող անձինք պետք է ունենան համապատասխան որակավորումներ՝ կարևորելով էթիկական արժեքները, բարեվարքությունը և մարդու իրավունքները, այդ թվում՝ իրենց հսկողության ներքո գտնվող անձանց արժանապատվության, անվտանգության և առողջության պաշտպանությունը:

3. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կամավորական գործունեությանը: Համապատասխան վերապատրաստում անցած և հսկողության ներքո գտնվող կամավորական անձնակազմը կարող է անգնահատելի ներդրում ունենալ սպորտի ընդհանուր զարգացման գործում և խրախուսել յուրաքանչյուրի մասնակցությունը սպորտային գործունեության իրականացման և կազմակերպման գործընթացում: Կամավորների հավաքագրումը, վերապատրաստումն ու կայուն ներգրավումը պետք է խրախուսվի կամավորական աշխատանքի ճանաչման, կամավոր մարզիչների համապարփակ վերապատրաստման և այլ միջոցների կիրառմամբ:

Հոդված 17. Տեղեկատվություն և հետազոտություն

1. Տեղական, ազգային և միջազգային մակարդակներում սպորտի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տարածման համապատասխան կառույցներն ու միջոցները պետք է բավարարեն նորագույն չափանիշներին և շարունակաբար զարգանան տեխնոլոգիական առաջընթացին համահունչ: Մասնավորապես,

պետք է պատշաճ հաշվի առնվեն թվայնացման և այլ կարևոր տեխնոլոգիական զարգացումների հնարավորություններն ու դրանց կիրառությունը սպորտի համատեքստում:

2. Պետք է շարունակաբար խթանվեն և աջակցվեն գիտական հետազոտությունները սպորտի բոլոր ասպեկտների վերաբերյալ՝ ներառյալ առողջության վրա դրա դրական և բացասական ազդեցությունը, էթիկայի և կառավարման խնդիրները, նոր միտումները և այլ առանցքային սկզբունքները: Պետք է ապահովվեն մեխանիզմներ առավել նպատակահարմար մակարդակում՝ տեղական, մարզային, համապետական կամ միջազգային, նման տեղեկատվության և հետազոտությունների արդյունքների տարածման և փոխանակման համար, ինչը հիմք կծառայի սպորտի ոլորտում հիմնավորված քաղաքականության հետագա մշակման համար:

Հոդված 18. Ֆինանսներ

1. Սույն Խարտիայի նպատակների իրագործման համար համազգային, մարզային և տեղական մակարդակներում պետք է տրամադրվեն համապատասխան աջակցություն և ռեսուրսներ պետական միջոցներից՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, վիճակախաղերի վճարներ, պետական բյուջեից համապատասխան հատկացումներ, հարկային արտոնություններ, տարածքների վարձակալության տրամադրում և այլն:

2. Պետք է խրախուսվի պետական և մասնավոր ֆինանսավորման համակցված համակարգը սպորտի համար, այդ թվում՝ սպորտային հատվածի կարողությունը՝ ինքնուրույն գեներացնելու և հատկացնելու համապատասխան ռեսուրսներ իր հետագա զարգացման համար ինչպես սոցիալական, այնպես էլ բարձր մակարդակի սպորտի առումով:

3. Սպորտային միջոցառումների կազմակերպման համար պետական աջակցությունը պետք է տրամադրվի՝ հաշվի առնելով համապատասխան բնապահպանական չափանիշներ և այն տնտեսական ու սոցիալական կայուն օգուտները, որոնք կարող

են ապահովել նման միջոցառումները՝ դրանց դրական ներուժի իրականացման և հանրային ընդունելիության բարձրացման նպատակով:

Հոդված 19. Ներպետական և միջազգային համագործակցություն

1. Սույն Խարտիայի նպատակների իրագործման համար պետք է ստեղծվեն համապատասխան կառույցներ տարբեր շահագրգիռ կողմերի միջև սպորտի զարգացման և խթանման պատշաճ համակարգման համար, եթե դրանք դեռևս առկա չեն համազգային, մարզային և տեղական մակարդակներում՝ այդպիսով ապահովելով, որ սպորտը լինի մեր հասարակության բարեկեցության կառուցվածքային տարր:

2. Սույն Խարտիայի նպատակների իրագործման համար անհրաժեշտ է նաև միջազգային համագործակցություն ինչպես համաշխարհային, այնպես էլ մայրցամաքային մակարդակներում: Դրան կարելի է հասնել լավագույն փորձի փոխանակման, կրթական ծրագրերի, կարողությունների զարգացման, շահերի պաշտպանության, պարտավորությունների ընդունման, ինչպես նաև ցուցանիշների և մշտադիտարկման ու գնահատման այլ գործիքների կիրառման միջոցով:

Զ. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 20. Խարտիայի իրագործման աջակցություն և հետագա քայլեր

1. Պետք է խրախուսվի, որ Եվրոպայի խորհուրդը, ընդհանուր առմամբ, և այլ միջազգային կազմակերպություններ սպորտը կիրառեն որպես արժեքների խթանման միջոց և սպորտը ներառեն ռազմավարություններում ու գործողությունների ծրագրերում:

2. Սույն Խարտիայի խթանմանն ու իրագործմանը նպաստելու համար համապատասխան շահագրգիռ կողմերին պետք է առաջարկվի իրենց քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում ստանձնել պարտավորություն Խարտիայի իրագործման ուղղությամբ:

3. Եվրոպական մակարդակում կարևոր է վերլուծել Խարտիայի իրագործման առաջընթացը և աջակցել դրան, մասնավորապես՝ երաշխավորելու սպորտի դրական ազդեցությունը առողջության, ներառականության և կրթության վրա, առավելագույնի հասցնելու դրա ներուժը՝ դինամիկ քաղհասարակության զարգացման, ինչպես նաև մարդու իրավունքների, իրավունքի գերակայության, ժողովրդավարական կառավարման և կայունության մշակույթը խթանելու համար, և դիմակայելու սպորտի բարեվարքությանը սպառնացող վտանգներին: Եվրոպայի խորհրդի Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիրը պետք է օգտագործվի Խարտիայի իրագործման առաջընթացը գնահատելու և այն խթանելու համար, այդ թվում՝

ա. դյուրացնելով տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը,

բ. կազմակերպելով թեմատիկ քննարկումներ Խարտիային առնչվող հարցերի շուրջ,

գ. հավաքագրելով և հրապարակելով տեղեկություններ՝ Խարտիայի իրագործումը մշտադիտարկելու նպատակով,

դ. աջակցելով Խարտիայի խթանմանն ու իրագործմանը պարբերաբար կազմակերպվող բազմակողմ և առանձին երկրների համար նախատեսված գործողությունների միջոցով:

Սպորտը հնարավորություն է. Այն մեզ սովորեցնում է հանդուրժողականություն և հարգանք: Այն մեզ թույլ է տալիս հաղթահարել մեր սահմաններ և սովորել միմյանցից՝ հաճախ վերացնելով տարբերություններն ու սահմանագծերը: Այն մեզ շատ առումներով ավելի ուժեղ է դարձնում:

Ավելի քան չորս տասնամյակ Եվրոպայի խորհուրդը հանդես է եկել ի շահ սպորտում արդար խաղի և հարգանքի՝ պայքարելով կոռուպցիայի դեմ և օգնելով սպորտը դարձնել անվտանգ, էթիկական և բոլորի համար հասանելի:

Եվրոպական սպորտի խարտիան Եվրոպայի խորհրդի չափորոշիչն է, որը սահմանում է ազգային սպորտային քաղաքականության հիմնական սկզբունքները՝ թույլ տալով կառավարություններին ապահովել սպորտով զբաղվելու հնարավորություն բոլորի համար հստակ սահմանված պայմաններում: Այն ոգեշնչում է քաղաքականություն մշակողներին և ծառայում է որպես ուղեցույց անդամ պետությունների համար՝ ինչպես կատարելագործել իրենց գործող սպորտային օրենսդրությունը կամ այլ քաղաքականությունները և մշակել սպորտի զարգացման համապարփակ շրջանակ:

1992 թվականին ընդունվելուց ի վեր Խարտիան եղել և մնում է Եվրոպայում սպորտի զարգացման հիմնական ուղենիշ, և այն իր արժեքներով ու սկզբունքներով օգուտ է բերել ինչպես երկրներին, այնպես էլ սպորտի ոլորտին: Դրա վերջին վերանայված տարբերակն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 13-ին:

www.coe.int/sport

PREMS 113326

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում: